



Հայկական միջազգային տնտեսական  
հետազոտությունների խումբ

50 Nalbandyan, 16 suite P.O. Box 28179  
Yerevan 0010, Armenia Washington, DC 20038-9998, USA  
Նալբանդյան 50, բն. 16 Փոստարկ 28179  
Երևան 0010, ԳԳ ԱՄՆ, Վաշինգտոն, 20038-9998,  
Հեռ/Phone: + 374 10 528 723 Հեռ/Phone: + 202 487 -5212, + 202 458 2589  
Ֆաքս/Fax: + 374 10 528 723 Ֆաքս/Fax: + 202 522-3124  
[www.aiprg.net](http://www.aiprg.net) Էլ-փոստ/E-mail: [info@aiprg.net](mailto:info@aiprg.net)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 17-18, 2008թ.

### Վերլուծական աշխատանքների մրցույթ

Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը (AIPRG) մայիսի 17-18-ին Համաշխարհային բանկի նստավայրում՝ Վաշինգտոնում, կազմակերպում է գիտաժողով՝ “Հայաստանի տնտեսության գլոբալ մրցունակությունը” խորագրով:

Պլանայինից շուկայական տնտեսության ավելի քան մեկ տասնամյակ տևած անցումից հետո Հայաստանն իրականացրել է կարևոր բարեփոխումներ, որոնց արդյունքում արձանագրել է տնտեսական բարձր աճ: Այն պահպանելու և հետագա տնտեսական զարգացումն ապահովելու համար պետությունը պետք է մշակի և իրականացնի երկրորդ սերնդի բարեփոխումներ, որոնց նպատակը կլինի՝ ա) ամրապնդել անցումային շրջանի ձեռքբերումները, բ) արդար և հավասար գործունեության դաշտ ապահովել մասնավոր հատվածի զարգացման համար, գ) արտահանումը խթանող ռազմավարական ճյուղերի ընտրությունն ը) հիմք ստեղծել հետագա զարգացման համար՝ ուժեղացնելով համապատասխան կառույցներն ու հատատությունները և արդիականացնելով սոցիալական ոլորտները, հատկապես հանրային կրթության բնագավառը:

Ներկայացվելիք աշխատանքները կարող են ընդգրկել հետևյալ թեմաները.

- Մրցակցության խթանում և մասնավոր հատվածի զարգացում
- Պետական քաղաքականության ազդեցությունը արտադրողականության վրա
- Փոխարժեքի ազդեցությունը տնտեսական աճի և արտահանման վրա
- Կրթության դերը և կրթության ոլորտի արդիականացման հետ կապված խնդիրները
- Ֆինանսական շուկաները և ինստիտուտները
- Շուկայի կառուցվածքը և մրցակցությունը
- Հեռահաղորդակցության և տրանսպորտի զարգացման հեռանկարները
- Սփյուռքի դերը
- Գիտության և տեխնոլոգիաների դերը զարգացման գործընթացում
- Պետական կառավարման խնդիրները տնտեսության զարգացման ոլորտում
- Երկրի զարգացման ռազմավարական հատվածների բացահայտում. արտահանման ներուժ ունեցող արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, սպասարկման ոլորտի և այլնի զարգացում

Հավանական հեղինակները մինչև 2008թ.-ի հունվարի 15-ը պետք է [annual\\_conference@aiprg.net](mailto:annual_conference@aiprg.net) էլ-փոստի հասցեով ուղարկեն իրենց աշխատանքների համառոտագրերը (ամփոփ նշելով ծրագրված հետազոտության հիմնական ուղղությունները, 1-2 էջի սահմաններում): Ընտրական հանձնաժողովը ընտրված աշխատանքների հեղինակներին մինչև 2008թ.-ի հունվարի 28-ը կտեղեկացնի արդյունքների մասին: Նախնական տարբերակների ներկայացման վերջնաժամկետը 2008թ.-ի ապրիլի 1-ն է, իսկ վերջնական աշխատանքներինը՝ ապրիլի 28-ը:

Ընտրված աշխատանքները կդիտարկվեն “Հանրային կառավարման հայկական տեղեկագրում” (Armenian Journal of Public Policy) տպագրվելու համար: Հրապարակման համար ընտրված լավագույն աշխատանքների հեղինակներին կտրամադրվի Վաշինգտոն մեկնելու ճանապարհորդական փոքր դրամաշնորհ:

Գիտաժողովի պաշտոնական լեզուն անգլերենն է: AIPRG-ի մասին հավելյալ տեղեկությունների համար, խնդրում ենք այցելել <http://www.aiprg.net> կայքը: Գիտաժողովի վերաբերյալ լրացուցիչ հարցերն ուղղել [annual\\_conference@aiprg.net](mailto:annual_conference@aiprg.net) էլ-փոստի հասցեով:

Գիտաժողովի աջակիցն է ՀՀ կառավարությունը: Հովանավորներն են՝ Համաշխարհային Բանկը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID):